



**ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՀՀ վարչապետի աշխատակազմի  
իրավաբանական վարչության գլխավոր  
իրավաբան,

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի  
պետության և իրավունքի տեսության և  
սահմանադրական իրավունքի ամբիոնի  
դասախոս,

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

DOI: 10.59560/18291155-2023.1-95

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԴՐՈՒԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

**Ամփոփագիր**

Հոդվածը նվիրված է անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձևերից՝ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ամրագրման հետ կապված առավել առանցքային հիմնահարցերին, որոնք էականորեն խոչընդոտում են այս ինստիտուտի կիրարկմանը: Պատահական չէ, որ 2015 թվականից մինչ օրս արձանագրվել է այս ինստիտուտի կիրառման միայն մեկ դեպք, որն էլ, ի թիվս այլնի, նաև հոդվածում ներկայացված հիմնահարցերի պատճառով լիարժեք չի իրականացվել:

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությունը, վեր հանել առավել առանցքային բնույթ ունեցող խնդիրները և ներկայացնել ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի կատարելագործման վերաբերյալ հիմնավորված առաջարկներ:

Ըստ այդմ, սույն հոդվածում հետազոտվում են ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման համար օրենսդրությամբ սահմանված որոշ շեմեր, ժողովրդական օրենսդրական նախաձեռնության առարկայի հետ կապված որոշ հարցեր, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ որպես այս ինստիտուտի իրականացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրը, հանրաքվեով ընդունված օրենքների և Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների միջև իրավաբանական ուժի հարաբերակցության հարցը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման կառուցակարգի որոշ «դետալներ»:

**Հիմնաբառեր.** ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն, ժողովրդական սահմանադրական նախաձեռնություն, միջազգային փորձ, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Ազգային ժողով, իրավաբանական ուժ, հանրաքվե:

### 1. Ընդհանուր բնութագիր

Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը՝ որպես իրավական ինստիտուտ, իրենից ներկայացնում է այնպիսի իրավական նորմերի ամբողջություն, որոնք կարգավորում են նորմատիվ իրավական ակտի նախագծի առաջադրման միջոցով հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված ժողովրդի (որոշակի քանակի քաղաքացիների) նախաձեռնության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով քննարկման և որոշման կայացման համար պարտադիր իրականացման ընթացակարգը<sup>1</sup>:

Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը դրսևորվում է Հայաստանի Հանրապետության ժողովրդի՝ հետևյալ հարցերում իրավաստեղծ գործունեությանը մասնակցելու հնարավորությամբ՝ Սահմանադրության ընդունում, Սահմանադրության մեջ փոփոխությունների կատարում, օրենքների ընդունում, գործող օրենքներում փոփոխությունների և/կամ լրացումների կատարում, գործողության դադարեցում: Ըստ այդմ, մեր կողմից ուսումնասիրման ենթակա հարցերը կարող ենք

<sup>1</sup> Թադևոսյան Ա., «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացությունը, էությունն ու բովանդակությունը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2/2022, էջ 89:

պայմանականորեն բաժանել երկու խմբի՝ Սահմանադրության հետ կապված (այսուհետ՝ ժողովրդական սահմանադրական նախաձեռնություն) և օրենքի հետ կապված ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն (այսուհետ՝ ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն):

Պետք է արձանագրել, որ մեր երկրում չկա ժողովրդաիշխանության իրականացման այս ձևին վերաբերող առանձին օրենք, ինչի արդյունքում այս ինստիտուտը կարգավորող բազում իրավանորմեր տարրալուծված են տարբեր օրենքներում, բայց դրանք առավելապես ամրագրված են «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում<sup>1</sup> (սույն հոդվածում այսուհետ՝ Սահմանադրական օրենք) և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում<sup>2</sup> (սույն հոդվածում այսուհետ՝ ԱԺ կանոնակարգ):

Սույն հոդվածի շրջանակներում առավել նպատակահարմար ենք համարում, առաջին հերթին, ուսումնասիրել ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունը կանոնակարգող օրենսդրական կարգավորումները, քանի որ ժողովրդական սահմանադրական նախաձեռնության ոլորտում մի շարք հարաբերություններ կարգավորվում են օրենսդրական նախաձեռնության համար սահմանված նույն կանոններով:

## 2. Ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն

*2.1 Քաղաքացիների անհրաժեշտ թվաքանակը:* Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ Ազգային ժողովին օրինագիծ առաջարկելու համար անհրաժեշտ են առնվազն հիսուն հազար ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ: Տարբեր երկրներում պահանջվող այս թվաքանակն ամրագրված է կա՛մ սահմանադրությամբ, կա՛մ օրենքով, և գործում են տարբեր մոտեցումներ. որոշ երկրներում պահանջվող քանակն արտահայտված է բացարձակ թվով, իսկ որոշներում՝ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների տոկոսային կամ կոտորակային հարաբերակցությամբ, օրինակ՝ Լատվիայում այդպիսի իրավունք ունեն ընտրողների մեկ տասներորդ մասը, իսկ Բելառուսում՝ հիսուն հազար քաղաքացիներ:

<sup>1</sup> «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 23.03.2018թ., ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) հոդվ. 348:

<sup>2</sup> «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 16.12.2016թ., ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) հոդվ. 45:

Այս հարցում որոշ հայրենական իրավագետներ գտնում են, որ նպատակահարմար է առաջնորդվել ոչ թե բացարձակ թվի նշումով, այլ կոտորակային կամ տոկոսային մեթոդով<sup>1</sup>: Մինչդեռ մենք գտնում ենք, որ սահմանադրի մոտեցումը՝ նվազագույն թվաքանակը սահմանել բացարձակ թվով, ճիշտ է, քանի որ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների քանակը պարբերաբար փոփոխվում է և յուրաքանչյուր նախաձեռնության դեպքում անհրաժեշտ ստորագրությունների քանակը որոշելու հարցը դրվելու է պետական համապատասխան մարմնի վրա՝ հաշվի առնելով, որ ընտրողների ռեգիստրը «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի<sup>2</sup> 9-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվում է ընդամենը տարին երկու անգամ: Տոկոսային կամ կոտորակային մեթոդով նվազագույն թվաքանակ որոշելը կարող է բացասաբար ազդել իրավական նորմերի որոշակիության և կայունության վրա, քանի որ ի սկզբանե նախաձեռնողների համար հստակ չի լինի այն, ինչպես նաև կհանգեցնի պետական համապատասխան մարմնից նախաձեռնողների կախվածությանը, ինչն էլ իր հերթին կարող է ստեղծել վիճելի իրավիճակներ:

Միևնույն ժամանակ կարծում ենք, որ քաղաքացիների համար գործող նվազագույն թվաքանակը բավականին բարձր է, որը նկատելի է հատկապես եվրոպական երկրներում ամրագրված մոտեցումների հետ համեմատության արդյունքում (տե՛ս Աղյուսակը):

**ԱՂՅՈՒՍԱԿ**

	Ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունները Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում		
Երկիր	Պահանջվող ստորագրությունների թիվը	Ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների թիվը	Տոկոսային հարաբերակցությունը
<b>Հայաստան</b>	<b>50.000</b>	<b>2.595.512</b>	<b>1.9</b>
Ալբանիա	20.000	3.452.324	0.57

<sup>1</sup> **Բադայան Ս.Ս.**, Օրենսդրական նախաձեռնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն իրավ. գիտ. թեկնածուի: Երևան, 2014, էջ 94:

<sup>2</sup> «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 25.05.2016թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) հոդվ. 456:

1(109)2023

ՍԱՀՄԱՆԱՐԴՈՎԿԱՆ ՂԱՏԱՐՎԱՆ ◆ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

Ավստրիա	100.000	6.400.993	1.56
Էստոնիա	1000	899.793	0.1
Իսպանիա	500.000	34.597.038	1.44
Իտալիա	50.000	50.736.204	0.09
Լեհաստան	100.000	29.228.202	0.3
Լիտվա	50.000	2.405.143	2.07
Նիդերլանդներ	40.000	3.018.064	1.3
Ռումինիա	100.000	18.964.642	0.5
Սլովենիա	5000	1.695.771	0.3
Սերբիա	30.000	6.502.307	0.5
Վրաստան	25.000	3.533.672	0.7
Ֆինլանդիա	50.000	4.255.466	1.17

Իհարկե պետք է նկատել նաև, որ կախված կոնկրետ երկրում այս ինստիտուտի իրականացման կառուցակարգերի առանձնահատկություններից՝ սահմանված են նաև այլ պահանջներ, օրինակ՝ Ռումինիայում նախաձեռնությանը պետք է միանան առնվազն ժողեւտների (հեղ. վարչատարածքային միավոր է Ռումինիայում) մեկ քառորդի քաղաքացիները, ընդ որում՝ յուրաքանչյուրից նվազագույնը հինգ հազար հոգի<sup>1</sup>, Բրազիլիայում՝ ժողովրդական օրենսդրական նախաձեռնության համար պահանջվում է ընտրողների առնվազն 1 տոկոսի ստորագրությունը, ընդ որում՝ նրանք պետք է լինեն Բրազիլիայի առնվազն հինգ նահանգներից:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք այլ առավել մեծաքանակ բնակչություն և ընտրողներ ունեցող երկրներում քննարկող թիվը շատ ավելի ցածր է, քան Հայաստանում: Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, իրենց զեկույցներից մեկում անդրադառնալով Ալբանիայում այս ինստիտուտի իրականացման հարցերին, նշում են, որ քսան հազար քաղաքացու ստորագրություն հավաքելը նախաձեռնող խմբի համար կարող է իրական խոչընդոտ լինել,

<sup>1</sup> Constitution of Romania, Article 74, էլ. ռեսուրս՝

<https://www.constituteproject.org/constitutions?lang=en&key=initiat> հղումն ըստ՝ 30.01.2023:

միևնույն ժամանակ փաստելով, որ միջազգային պրակտիկայում չկան այս հարցի վերաբերյալ միասնական մոտեցումներ<sup>1</sup>:

Սա ժողովրդական օրենսդրական նախաձեռնության իրականացման առաջին ու թերևս հիմնական խոչընդոտ հանդիսացող գործոնն է: Գտնում ենք, որ այդ թիվը պետք է նվազեցնել, իսկ կոնկրետ թվի որոշումը կայացվի հասարակական լայն կոնսենսուսի պայմաններում: Որպես չափանիշ կարող է ընդունվել յուրաքանչյուր պատգամավորին բաժին ընկնող ընտրողների թիվը: Հայաստանում վերջին համապետական ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեցող անձանց թիվը կազմել է 2,595,512 մարդ<sup>2</sup>, որը եթե բաժանենք Սահմանադրությամբ սահմանված պատգամավորների նվազագույն թվի վրա, կստացվի մոտ 25 հազար մարդ, որն էլ կարելի է ամրագրել որպես քաղաքացիների անհրաժեշտ նվազագույն թվաքանակ: Իսկ եթե դիտարկենք բուն քվեարկությանը մասնակցած անձանց թվի (1,281,997 մարդ) և ԱԺ վերջին գումարման պատգամավորների թվի (107 պատգամավոր<sup>3</sup>) հարաբերակցությունը, ապա կստացվի ավելի փոքր թիվ՝ մոտ 12 հազար մարդ:

*2.2 Ժողովրդական օրենսդրական նախաձեռնության կարգով օրենքներում փոփոխությունների իրականացումը:* Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում օրենսդրական այն կարգավորումները, որոնք վերաբերում են ընթացիկ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելուն՝ այն իմաստով, որ արդյո՞ք ժողովրդական նախաձեռնության կողմից ներկայացվող օրենքի նախագիծը կարող է ուղղված լինել գործող օրենքներում փոփոխություններ իրականացնելուն:

Այս հարցերը կարգավորող հիմնարար օրենքի՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի<sup>4</sup> 34-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Միևնույն ժամանակ, նույն օրենքի 37-րդ, 38-րդ և 38.1-

<sup>1</sup> Venice commission, OSCE ODIHR, Albania, Joint opinion, On the draft law on the legislative initiative of the citizens, Strasbourg/Warsaw, 22 October 2018, CDL-AD(2018)026.

<sup>2</sup> Էլ. ռեսուրս՝ <https://www.elections.am/Elections/Parliamentary> հղումն ըստ 06.01.2023 թ.:

<sup>3</sup> Էլ. ռեսուրս՝ <http://parliament.am/deputies.php?sel=factions&lang=arm> հղումն ըստ 07.01.2023 թ.:

<sup>4</sup> «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 21.03.2018 թ., ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) հոդվ. 373:

ին հողվածները, որոնք վերաբերում են նորմատիվ իրավական ակտերի գործողության դադարեցման տարբեր տեսակներին՝ իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելուն, անվավեր ճանաչելուն և չեղյալ ճանաչելուն, սահմանում են, որ այն կարող է տեղի ունենալ իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի որոշմամբ: Վերաբերելի իրավանորմեր այլ օրենքներում սահմանված չեն, հետևաբար ստացվում է, որ օրենսդիրը տարբեր կերպ է կարգավորում ընթացիկ օրենսդրության մեջ փոփոխություններ իրականացնելու հարցը՝ փոփոխություններ և լրացումներ իրականացնելու հնարավորություն ընձեռելով միայն այդ ակտն ընդունած մարմնին կամ նրա իրավահաջորդին, իսկ ահա գործողության դադարեցման հնարավորություն տալիս է իրավաստեղծ մարմիններին:

Հասկանալի է, որ օրենսդրի այսպիսի տարբերակված մոտեցումը չի կարող լինել ինքնանպատակ, և հաշվի առնելով, որ «իրավական ակտն ընդունած մարմին» և «իրավաստեղծ մարմին» հասկացությունները նույնական չեն, դրանք հարաբերակցվում են միմյանց որպես «մասն» «ընդհանուրի», գտնում ենք, որ ժողովրդական օրենսդրական նախաձեռնության իրականացման շրջանակները որոշակիորեն սահմանափակվում են ընթացիկ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցում, իսկ գործողության դադարեցման մասով այդպիսի սահմանափակումներ չկան: Գործողության դադարեցման մասով այդպիսի սահմանափակումների բացակայությունը, թերևս, պայմանավորված է ժողովրդին այնպիսի իրավունք ընձեռելու լեգիտիմ նպատակով, որը տեսության մեջ հաճախ հանդիպում է որպես «ժողովրդական վետոյի» ինստիտուտ: Այդ ինստիտուտի էությունը կայանում է քաղաքացիների կողմից գործող որևէ օրենքի լրիվ կամ մասնակի ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ հանրաքվե նախաձեռնելու մեջ<sup>1</sup>:

Ժողովրդական օրենսդրական նախաձեռնության իրականացմամբ ընթացիկ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու սահմանափակումները դրսևորվում են այն համատեքստում, որ թեև ժողո-

<sup>1</sup> **Маклаков В.В.** Референдум в зарубежных странах. - Москва, 2014. - С. 21; **Грачев В.С.** Правовые формы воздействия на государство субъектов гражданского общества // Закон и право. - 02/2020. - С. 24; էլ. նետուրս՝

<https://cyberleninka.ru/article/n/pravovye-formy-vozdeystviya-na-gosudarstvo-subektov-grazhdanskogo-obschestva/viewer>, հղումն ըստ 14.12.2022 թ.:

վրդական նախաձեռնության կողմից ներկայացված համապատասխան օրինագիծն Ազգային ժողովի կողմից ընդունվելու դեպքում կարող է ենթարկվել համապատասխան փոփոխությունների և լրացումների, բայց մերժման դեպքում արդեն այն չի կարող դրվել հանրաքվեի և ընդունվել անմիջականորեն ժողովրդի կողմից:

Կարծում ենք, որ այսպիսի մոտեցումն արդարացված չէ և անհարկի սահմանափակում է ժողովրդի կողմից անմիջականորեն իրավաստեղծ գործունեություն իրականացնելու հնարավորությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ լայնածավալ և բազմակողմ կարգավորումներ ունեցող գործող օրենսդրության պայմաններում քաղաքացիները կա՛մ պետք է սահմանափակվեն միայն օրենքներում փոփոխություններ, լրացումներ նախատեսող օրինագծեր Ազգային ժողով ներկայացնելով և վերջինիս որոշմամբ «բավարարվելով», կա՛մ իրենց իրավունքը լիարժեքորեն կարող են իրացնել ընթացիկ օրենքի գործողությունը դադարեցնելով և նոր օրենք ընդունելով, կա՛մ միայն այնպիսի ոլորտներում կամ այնպիսի հարցերի վերաբերյալ օրինագծեր ներկայացնելով, որոնք կարգավորող օրենքներ դեռևս չկան:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ պետք է օրենսդրորեն հստակ սահմանվեն ժողովրդական օրենսդրական նախաձեռնության առարկայի շրջանակները՝ դրանց հիմքում դնելով կոնկրետ չափանիշներ, որոնք հաշվի կառնեն այս ինստիտուտի ողջ դերն ու նշանակությունը: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ ժողովրդին պետք է հնարավորություն տրվի նաև գործող օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, ուստի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի վերը հիշատակված հոդվածները հարկ է փոփոխել՝ դրանցում որպես իրավասու սուբյեկտ նախատեսելով նաև ՀՀ ժողովրդին:

*2.3 Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարգավիճակի հիմնահարցը:* Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների իրականացման գործընթացում առանձնահատուկ դեր ու նշանակություն ունի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ, նաև՝ Հանձնաժողով), որին Սահմանադրական օրենքով վերապահվել են մի շարք լիազորություններ, ինչը սակայն, մեր դիտարկմամբ, խնդրահարույց է և չի բխում Հանձնաժողովի սահմանադրաիրավական կարգավիճակից:

◆ 1(109)2023

◆ ՏԵՂԵԿՎՈՐ

◆ ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱՆ ՂԱՏԱՐԱՆ



Մասնավորապես, Հանձնաժողովի կարգավիճակը բնութագրող սահմանադրական հիմնադրույթի (194-րդ հոդված, 1-ին մաս) համաձայն՝ այն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 4-րդ մասով սահմանադիրն ամրագրում է, որ ընտրական հանձնաժողովների լիազորությունները սահմանվում են «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով: Հանձնաժողովի լիազորությունները սահմանող Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում նշված չեն ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացվող լիազորությունները:

Ինչպես տեսնում ենք՝ Սահմանադրությունը ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների իրականացման համար, ըստ էության, վերահսկողական գործառույթ Հանձնաժողովի համար չի նախատեսել, ընդ որում՝ հանրաքվեների կազմակերպման և դրանց օրինականության նկատմամբ վերահսկողության սահմանադրական գործառույթը որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների օրինականության նկատմամբ վերահսկողական գործառույթ, քանի որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունները կարող են լիարժեք իրացվել նաև առանց հանրաքվեի՝ Ազգային ժողովի կողմից իրավական ակտի նախագիծն ընդունվելու դեպքում:

Բացի դրանից, թե՛ Սահմանադրությունը, թե՛ Ընտրական օրենսգիրքը Հանձնաժողովի լիազորությունների սահմանումը նախատեսել են բացառապես Ընտրական օրենսգրքի շրջանակներում, իսկ Ընտրական օրենսգրքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդպիսի լիազորություններ Հանձնաժողովը չունի և չի էլ կարող ունենալ, քանի որ դա չի բխի վերջինիս՝ որպես սահմանադրական մարմնի գործառույթներից և կարգավիճակից:

Այս համատեքստում հարկ է վկայակոչել Սահմանադրական դատարանի՝ իր որոշումներից մեկում արտահայտած այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ-ինստիտուտ-իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա (...): Այդ եռամիասնության մեջ ինստի-

տուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը»<sup>1</sup>: Հետևաբար՝ չկա գործառույթ, չկա լիազորություն:

Ուստի, մեր երկրում ներկա պահին սահմանադրական փոփոխությունների շուրջ ընթացող քննարկումների պայմաններում գտնում ենք, որ պետք է պատշաճ ուշադրության արժանանա այս հարցը, մասնավորապես պետք է վերանայվեն Հանձնաժողովի սահմանադրական գործառույթները, ստեղծվեն սահմանադրաիրավական պատշաճ հիմքեր ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության իրականացման կառուցակարգում վերջինիս իրավասությունների շրջանակի հստակեցման համար:

**3. Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունը՝ որպես ժողովրդի կողմից անմիջականորեն հանրաքվե նախաձեռնելու միակ հնարավորություն**

*3.1 Քաղաքացիների անհրաժեշտ թվաքանակը:* Հարկ ենք համարում անդրադառնալ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնությունների իրականացմանը վերաբերող որոշ այլ օրենսդրական հիմնահարցերի, որոնք սերտ կապված են նաև հանրաքվեի ինստիտուտի հետ, քանի որ գործող օրենսդրության պայմաններում հանրային հետաքրքրություն ներկայացնող որևէ հարց ժողովրդի անմիջական նախաձեռնությամբ հանրաքվեի դնելու միակ կառուցակարգը հանդիսանում է այդ հարցը իրավական ակտի (գերակշիռ դեպքերում՝ օրենքի) նախագծի ձևով ձևակերպելը և ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության ինստիտուտի ընձեռած հնարավորություններով այն շրջանառելը<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-766, ընդունվել է 2008 թվականի հոկտեմբերի 14-ին:

<sup>2</sup> **Թադևոսյան Ա.**, «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացությունը, էությունն ու բովանդակությունը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2/2022, էջ 90:

Սահմանադրական մակարդակում այս երկու ինստիտուտների փոխկապակցվածության վերաբերյալ հիմնադրույթներն ամրագրվել են 204-րդ հոդվածում: Մասնավորապես, հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե Ազգային ժողովը մերժում է ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսուն օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի: Հետաքրքրական է, որ Լատվիայում գործող կառուցակարգի համաձայն՝ օրինագիծը մեխանիկորեն է դրվում հանրաքվեի, այն դեպքում, երբ խորհրդարանը չի ընդունում օրինագիծը կամ ընդունում է էական փոփոխություններ կատարելով<sup>1</sup>:

Նախաձեռնող խմբի կողմից ստորագրությունների հավաքումն իրականացնելը և պետական մարմնի կողմից դրանց վավերականությունը հաստատելը ընդունված պրակտիկա է նաև ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, Լեհաստանում, Իտալիայում և այլ երկրներում: Ավելին, ԱՄՆ-ում՝ նահանգների մակարդակում գործում են նույնիսկ հատուկ մասնագիտացված կազմակերպություններ, որոնք զբաղվում են նախաձեռնությունների համար ստորագրությունների հավաքագրմամբ:

Այսպիսով ստացվում է, որ հիսուն հազար քաղաքացիների ներկայացրած օրենքի նախագիծը Ազգային ժողովի կողմից մերժվելուց հետո, անհրաժեշտ է ևս երեք հարյուր հազար քաղաքացու ստորագրություն, որպեսզի հնարավորություն լինի «հաղթահարելու» խորհրդարանի մերժումը:

Ինչպես տեսնում ենք՝ այս դեպքում ևս սահմանադիրն ամրագրել է բացարձակ թիվ, որը հանդիպում է նաև Իտալիայում և Շվեյցարիայում, իսկ օրինակ՝ ԱՄՆ-ում, որպես կանոն, ստորագրությունների քանակը որոշվում է վերջին ընտրություններում մասնակցած ընտրողների տոկոսային հարաբերակցությամբ, որը տատանվում է 5-ից 10 տոկոսի սահմաններում: Այս մասին մեր դիրքորոշումն արդեն հայտնել ենք, ուստի անդրադառնանք թվի մեծությանը, որը մեր գնահատմամբ օրենքի նախագիծ առաջարկելու համար նախատեսված թվի նման ևս շատ բարձր է:

<sup>1</sup> F. Ratto Trabucco, The Latvian direct democracy tools in a comparative European context, Oñati Socio-Legal Series, 2019, 10(4), P. 762.

Ինչպես նշում են մասնագետները՝ հանրաքվե նախաձեռնելու համար որպես նվազագույն քանակ անհրաժեշտ ընտրական իրավունք ունեցող անձանց 5 տոկոսանոց շեմ նախատեսելը նախաձեռնության իրականացումը դարձնում է խնդրահարույց, իսկ 10 տոկոսանոց շեմ նախատեսելն այն դարձնում է գրեթե անհնարին<sup>1</sup>: Վենետիկի հանձնաժողովն իր զեկույցներից մեկում նշում է, որ հանրաքվեի դնելու համար ստորագրությունների հավաքման համար ցանկալի է նախատեսել բավականին բարձր շեմ, որը կերաշխավորի, որ հանրաքվեի կղրվեն միայն այնպիսի հարցեր, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ընտրողների նշանակալի խմբի համար՝ այդպիսով պահպանելով հանրաքվեի՝ որպես ներկայացուցչական ժողովրդավարության լրացնող լինելու հատկանիշը: Մյուս կողմից, այդ շեմը չպետք է լինի այնքան բարձր, որ հանրաքվեի անցկացման համար նախատեսի զուտ տեսական հնարավորություններ: Բացի դրանից, այն պետք է համաչափ լինի գրանցված ընտրողների թվին<sup>2</sup>:

Մինչդեռ, Հայաստանում վերջին համապետական ընտրությունների ժամանակ ընտրական իրավունք ունեցող անձանց թիվը կազմել է 2,595,512 մարդ<sup>3</sup>: Պարզ հաշվարկի արդյունքում կարող ենք արձանագրել, որ օրինագիծը հանրաքվեի դնելու համար գործող տվյալներով պահանջվում է մոտավորապես ընտրական իրավունք ունեցող անձանց ևս 11,5 տոկոսը: Ավելին, հաշվի առնելով խնդրո առարկա իրավանորմում «ևս» շաղկապի գործածումը, հարկ է արձանագրել, որ այս երեք հարյուր հազար քաղաքացիների մեջ չեն կարող ներառվել օրինագիծը Ազգային ժողով ներկայացնելու համար արդեն իսկ ներգրավված հիսուն հազար ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները: Այսինքն, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է երեք հարյուր հիսուն հազար ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներ:

Հարկ է նկատել, որ օրենսդիրը հենց այս տրամաբանությամբ առաջնորդվելով նույն՝ 350.000 թիվն է սահմանել հանրաքվեով ընդունված օրենքում փոփոխություններ կատարելու համար հանրաքվե նախաձեռնելու դեպքում: Ընդ որում, այդ դեպքում արդեն նախագիծը չի ներկայացվում Ազգային ժողով, այլ Սահմանադրական դատարանի կողմից

<sup>1</sup> Hamon F., Le referendum, Étude comparative, 2-e éd., Paris, 2012, P. 39.

<sup>2</sup> Venice commission, Revised code of good practice on referendums, Strasbourg, 20 June 2022, CDL-AD(2022)015, p. 15.

<sup>3</sup> Էլ. ռեսուրս՝ <https://www.elections.am/Elections/Parliamentary> հղումն ըստ 06.01.2023:

Սահմանադրությանը համապատասխանող ճանաչվելու դեպքում դրվում է հանրաքվեի (Սահմանադրական օրենք, 10-րդ հոդված):

Ժողովրդական նախաձեռնության կարգով Լատվիայում և Խորվաթիայում օրենքի նախագծերը հանրաքվեի կարող են դրվել ընտրազանգվածի 10 տոկոսի<sup>1</sup>, Հունգարիայում՝ երկու հարյուր հազար ընտրողների<sup>2</sup>, Սերբիայում՝ հարյուր հազար ընտրողների պահանջով<sup>3</sup>: Ընդ որում, այս երկրներում ընտրազանգվածը շատ ավելի մեծ է, քան Հայաստանում: Ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկան՝ 1995 թվականից մինչև 2019 թվականն ընկած ժամանակահատվածում «ժողովրդական նախաձեռնությամբ ոչ մի հանրաքվե չի անցկացվել այնպիսի երկրում, որտեղ պահանջվող ստորագրությունների համար նախատեսված է էլեկտորատի 5 տոկոսը գերազանցող շեմ»<sup>4</sup>:

Ավելին, Սահմանադրության 202-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ երկու հարյուր հազար քաղաքացիներ կարող են նախաձեռնել նոր Սահմանադրության նախագիծը կամ Սահմանադրության առավել կարևոր հոդվածներում փոփոխություններ կատարելու նախագիծը հանրաքվեի առարկա դարձնելու գործընթաց, իսկ հարյուր հիսուն հազարը՝ Սահմանադրության այլ հոդվածներում փոփոխություններ կատարելու նախագիծը: Ստացվում է, որ բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտի՝ Սահմանադրության ընդունման կամ փոփոխման հարցը հանրաքվեի դնելու համար առավել նվազ շեմ է նախատեսված, քան օրենքների նախագծերի համար: Իհարկե, պետք է նկատել, որ Սահմանադրության դեպքում հարցը հանրաքվեի դնելու համար պարտադիր է Ազգային ժողովի համապատասխան որոշման ընդունումը պատգամավորների ձայների սահմանված հարաբերակցությամբ, իսկ ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունների դեպքում օրենքի նախագիծը հանրաքվեի դրվում է առանց խորհրդարանի այդպիսի որոշման անհրաժեշ-

<sup>1</sup> Constitution of Croatia, Article 87, էլ. ռեսուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Croatia\\_2013?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Croatia_2013?lang=en) հղումն ըստ՝ 18.12.2022 թ.:

<sup>2</sup> Constitution of Hungary, Article 8, էլ. ռեսուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Hungary\\_2016?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Hungary_2016?lang=en) հղումն ըստ՝ 23.12.2022 թ.:

<sup>3</sup> Constitution of Serbia, Article 108, էլ. Ռեսուրս [https://www.constituteproject.org/constitution/Serbia\\_2006?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Serbia_2006?lang=en) հղումն ըստ՝ 23.12.2022 թ.:

<sup>4</sup> **Raul Magni-Berton, Clara Egger**, RIC Le Référendum d'initiative citoyenne expliqué à tous: Au coeur de la démocratie directe, FYB Editions, 2019, P. 84-86.

տության՝ համապատասխան ընթացակարգերն անցնելուց հետո՝ մեխանիկորեն, բայց դա չի կարող արդարացնել սահմանադրի նման մոտեցումը:

Կարծում ենք՝ այսպիսի մեծ թվի սահմանումը բացի նրանից, որ անհաղորդ է դարձնում ինստիտուտի բուն հասցեատիրոջը՝ ժողովրդին, իր իրավունքը լիարժեք իրացնելուց, այլև ուրիշ երկրների փորձը ցույց է տալիս, որ այն հանգեցնում է քաղաքական կուսակցությունների կամ նմանաբնույթ այլ ազդեցիկ միավորումների կողմից այս ինստիտուտի մոնոպոլիզացիային: Սա ևս կարևոր է փաստելու համար, որ ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնության կարգով հիսուն հազար քաղաքացիների կողմից ներկայացված օրենքի նախագիծը Ազգային ժողովի կողմից մերժվելուց հետո հանրաքվեի դնելու համար սահմանված ևս երեք հարյուր հազար քաղաքացիների համապատասխան նախաձեռնությանը միանալու պահանջը որևէ կերպ արդարացված չէ, ուստի այդ թիվն անհրաժեշտ է նվազեցնել՝ Սահմանադրության փոփոխությունների օրինակով նախատեսելով նախաձեռնությանը առավելագույնը ևս հարյուր հիսուն հազար քաղաքացիների միացումը:

*3.2 Ընթացակարգի հաջորդականությունը:* Երեք հարյուր հազար քաղաքացիների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Հանձնաժողովը, որի որոշումը ստանալուց հետո նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը պարտադիր դիմում է Սահմանադրական դատարան՝ նախագծի սահմանադրականությունը որոշելու հարցով: Պետք է նշել, որ Սահմանադիրն այս կառուցակարգը նախատեսել է նաև 168-րդ հոդվածում՝ իմպերատիվ կերպով ամրագրելով, որ մինչև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը Սահմանադրական դատարանը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ 169-րդ մասի 2-րդ մասում սահմանվել է, որ քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:

Սահմանադրական դատարանն օրենքի նախագծի՝ Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող ճանաչելու մասին որոշումն ընդունում է «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Սահմանադրական դատարանի կողմից

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՎԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ 1(109)2023

օրենքի նախագիծը Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում նախագիծը հանրաքվեի չի դրվում, իսկ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե: Սահմանադրական դատարանում սույն գործի քննության առանձնահատկությունները սահմանվում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 72-րդ հոդվածով սահմանված կարգով:

Կարծում ենք՝ օրենսդրորեն սահմանված բարձր շեմերի պայմաններում այսպիսի կառուցակարգը լրացուցիչ ծանրաբեռնում է նախաձեռնությանը և Հանձնաժողովին, քանի որ կարող է իմաստազրկվել նախաձեռնությանը ևս երեք հարյուր հազար քաղաքացիների միացումը և Հանձնաժողովի կողմից դրա հետ կապված լիազորությունների իրականացումը, քանի որ Սահմանադրական դատարանի կողմից օրինագիծը Սահմանադրությանը հակասող ճանաչելու դեպքում գործընթացը վերջնականապես ավարտվում է: Մեր կարծիքով՝ առավել նպատակահարմար և արդյունավետ կլինի, որպեսզի օրինագիծը նախաձեռնող խմբի կամարտահայտությամբ առաջին հերթին ներկայացվի Սահմանադրական դատարան, որից հետո միայն դատարանի կողմից այն Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում՝ սկսվի ստորագրությունների հավաքման փուլը:

*3.3 Հանրաքվեով ընդունված օրենքների և Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների իրավաբանական ուժերի հարաբերակցությունը:* Կարևոր հիմնադրույթ է պարունակում նաև 204-րդ հոդվածի 2-րդ մասը, որով հանրաքվեի միջոցով ընդունված օրենքների համար սահմանվում են որոշակի առանձնահատկություններ, այն առումով, որ դրանց մեջ փոփոխություն հնարավոր է իրականացնել միայն հանրաքվեի միջոցով: Այդպիսով սահմանադիրն, ըստ էության, առանձնահատուկ մոտեցում է դրևստրում ժողովրդաիշխանության սկզբունքից բխող ժողովրդի կողմից անմիջական իրավաստեղծ գործունեության արդյունքում ընդունված իրավական ակտերի նկատմամբ՝ դրանց համար նախատեսելով փոփոխության առավել «կոշտ» և բարդացված ընթացակարգ:

Այս համատեքստում հարկ է քննարկման առարկա դարձնել հանրաքվեի միջոցով ընդունված օրենքների իրավաբանական ուժի հարցը:

Ընդ որում, այս խնդիրն արդիական է գործող օրենսդրության պայմաններում, քանի որ օրենսդրական վերջին փոփոխություններն ընթացել են այսպիսի հարցերի մանրամասնորեն նորմատիվ ամրագրման անհրաժեշտության բացակայության տրամաբանությամբ, քանի որ իրավական ակտերի աստիճանակարգության վերաբերյալ կարգավորումներ շատ ընդհանուր գծերով առկա են միայն Սահմանադրության 5-րդ հոդվածում, իսկ ոլորտը կանոնակարգող ընթացիկ օրենքներում այս հարցը բաց է:

Ընդհանրապես, ցանկացած իրավական ակտի հիերարխիկ առավելությունը (Lex superior derogat legi inferiori) մյուսի նկատմամբ պետք է ունենա ինչպես տեսական, այնպես էլ նորմատիվ հիմնավորում: Հատկանշական է, որ նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» օրենքն այս հարցը կարգավորում էր՝ սահմանելով, որ ՀՀ Ազգային ժողովի ընդունած և հանրաքվեով ընդունված օրենքների միջև հակասության դեպքում գործում են հանրաքվեով ընդունված օրենքի նորմերը<sup>1</sup>: Այդպիսով, օրենքն ուղղակիորեն առավել բարձր իրավաբանական ուժ էր տալիս հանրաքվեով ընդունված օրենքներին, ընդ որում, այս մոտեցումն է գերիշխում նաև տեսական մակարդակում<sup>2</sup>:

Այս մոտեցումն, իր հերթին, բխում է իրավաբանական ուժի հիմքում դրված այն ընդունված չափանիշից, ըստ որի այս կամ այն իրավական ակտի իրավաբանական ուժի վրա ազդող հիմնական գործոնը այդ ակտն ընդունող մարմնի տեղն ու դերն է հանրային իշխանության մարմինների համակարգում<sup>3</sup>: Ինչպես նշում է ամերիկյան Սահմանադրության հիմնադիր հայրերից Ալ. Համիլտոնը. «Սահմանադրությունը պետք է նախապատվություն ունենա օրենքի նկատմամբ, ժողովրդի մտադրությունը՝ իր

<sup>1</sup> «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդվածի 6-րդ մաս, ընդունվել է 03.04.2002 թվականին, ուժը կորցրել է 07.04.2018 թվականին, ՀՀՊՏ 2002.05.21/15(190), հոդվ. 344:

<sup>2</sup> Գիտ. խմբ.՝ **Ղամբարյան Ա., Մուրադյան Մ.**, Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 3-րդ լրամշակված հրատարակություն: Երևան, 2018, էջ 571:

<sup>3</sup> **Петров А.А., Шафиров В.М.** Предметная иерархия нормативных правовых актов. - Москва, 2014. - С. 70; **Авакьян С.А.** Конституционное право: Энциклопедический словарь. - Москва, 2000. - С. 664; **Самощенко И.С.** Иерархия и основные подразделения нормативных актов социалистического государства: Ученые записки ВНИИСЗ, 1968, Вып. 15, - С. 4; **Кутафин О.Е.** Источники конституционного права Российской Федерации. - Москва, 2002. - С. 24; **Лейст О. Э.** Сущность права: Проблемы теории и философии права. - Москва, 2008. - С. 244.



ներկայացուցիչների նկատմամբ»<sup>1</sup>: Այս համատեքստում հաշվի առնելով այն, որ ժողովրդի անմիջական մասնակցությամբ հանրաքվեի միջոցով օրենքների ընդունումն ուղղակիորեն բխում է անմիջական ժողովրդա-իշխանության սկզբունքից, կարող ենք տեսականորեն եզրահանգել, որ դրանք ունեն առավել բարձր ուժ, քան խորհրդարանի ընդունած օրենքները: Սակայն, ինչպես նշեցինք, աստիճանակարգության վերաբերյալ պնդումները պետք է ունենան ոչ միայն տեսական, այլև նորմատիվ հիմնավորում: Ուստի, այս հարցում օրենսդրության ոչ հստակության պայմաններում, հարկ է հարցի պատասխանը գտնել՝ վերլուծության ենթարկելով գործող վերաբերելի իրավանորմերը:

Նախ, պետք է արձանագրել, որ մեր երկրում հանրաքվեի արդյունքում ընդունված որոշումներն ունեն համապարտադիր և եզրափակիչ բնույթ բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ Ազգային ժողովի համար, և որևէ մարմին չունի դրանք վավերացնելու կամ հաստատելու իրավասություն: Այնուհետև, վերը վկայակոչված սահմանադրական նորմն առ այն, որ հանրաքվեով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով և ի լրումն դրան՝ Սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, համաձայն որի՝ իմպերատիվ կերպով հանրաքվեի է դրվում հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը, թույլ են տալիս մեզ միանշանակ պնդում կատարել առ այն, որ հանրաքվեով ընդունված օրենքներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ, քան «սովորական» օրենքները: Սա նշանակում է, որ Ազգային ժողովը չի կարող դադարեցնել այս ակտի գործողությունը կամ դրանում կատարել փոփոխություններ: Այսպիսի օրենքների կոլիզիաների դեպքում չի կարող գործել «ավելի ուշ ընդունված օրենքը վերացնում է նախորդի գործողությունը» կանոնը (*lex posterior derogat legi priori*), այլ այս պարագայում կարելի է եզրահանգել, որ կոլիզիան պետք է լուծել հոգուտ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքների *lex superior* կանոնի հիման վրա:

Այս տրամաբանության շրջանակներում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1590 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը,

<sup>1</sup> Alexander Hamilton, James Madison and John Jay, *The Federalist*, Edited with and introduction and Notes by Lawrence Goldman Oxford University Press Inc., New York, 2008, P. 381-382.

որում անդրադառնալով Սահմանադրությամբ ամրագրված դրույթների աստիճանակարգությանը՝ դատարանն ըստ էության նշել է, որ հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթները գերակայում են ՀՀ Ազգային ժողովի կողմից փոփոխվող սահմանադրական նորմերի նկատմամբ<sup>1</sup>:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև Սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վրա, համաձայն որի՝ հանրաքվեի չեն կարող դրվել այն նախագծերը, որոնք արդեն իսկ դրվել են հանրաքվեի նախորդ մեկ տարվա ընթացքում և նույնաբովանդակ են: Այս իրավակարգավորումից հետևում է, որ այդ սահմանված ժամկետում lex posterior կանոնը չի կարող կիրառվել նաև այդպիսի բովանդակությամբ հանրաքվեով ընդունվող երկու օրենքների դեպքում:

Ինչ վերաբերում է հանրաքվեի միջոցով ընդունված օրենքների և սահմանադրական օրենքների իրավաբանական ուժերի հարաբերակցությանը, ապա այստեղ ամեն ինչ միանշանակ է. սահմանադրական օրենքներն ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ: Քանի որ, նախ սահմանադիրը 5-րդ հոդվածի 2-րդ մասում հստակ նախատեսել է, որ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, և երկրորդ, Սահմանադրության 204-րդ հոդվածի 3-րդ մասը և Սահմանադրական օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում են, որ հանրաքվեի չեն կարող դրվել, ի թիվս այլնի, այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային:

**4. Ժողովրդական սահմանադրական նախաձեռնության իրականացման որոշ առանձնահատկություններ**

Ժողովրդական սահմանադրական և օրենսդրական նախաձեռնություններն ունեն մի շարք ընդհանրական կարգավորումներ, ուստի կանդիդատներն առաջ կոնկրետ այս ինստիտուտին վերաբերող իրավակարգավորումներին:

Սկսենք սահմանադրական հիմնադրույթներից, որոնք ամրագրված են «Սահմանադրության ընդունումը, փոփոխությունը և հանրաքվե» վերտառությամբ 15-րդ գլխում: Նախ, Սահմանադրության 202-րդ հոդվածն ամրագրում է, որ Սահմանադրությունն ու Սահմանադրության որոշ

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-1590, ընդունվել է 2021 թվականի ապրիլի 29-ին:

առանցքային հողվածներ կարող են ընդունվել միայն հանրաքվեի միջոցով, իսկ դրա նախաձեռնության իրավունք, ի թիվս այլ սուբյեկտների, ունեն ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացիներ: Ներկայացված նախաձեռնությունը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

Ինչ վերաբերում է Սահմանադրության մյուս հողվածներում փոփոխություններ կատարելուն, ապա դրա իրավունքը վերապահված է Ազգային ժողովին, բայց եթե Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով մերժում է ներկայացված նախագիծը (այս դեպքում նախաձեռնության իրավունք ունեն ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացիներ), ապա արդեն պատգամավորների ընդհանուր թվի ձայների երեք հինգերորդի կողմից ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:

Ինչպես տեսնում ենք՝ Սահմանադրության կամ սահմանադրական փոփոխությունների ընդունման համար պարտադիր պայման է խորհրդարանի համապատասխան որոշումը:

Օրենքների մակարդակում այս ինստիտուտը նախորդիվ քննարկվածի պես կրկին առավելապես կարգավորվում է Սահմանադրական օրենքով և ԱԺ կանոնակարգով, որի 84-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության փոփոխությունների քաղաքացիական նախաձեռնությունն իրականացվում է քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողով օրենքի նախագիծ ներկայացնելու համար՝ Սահմանադրական օրենքով սահմանված կարգին համապատասխան:

Հարկ է նկատել, որ ժողովրդական սահմանադրական նախաձեռնության դեպքում ի տարբերություն օրենսդրական նախաձեռնության՝ Սահմանադրական օրենքով Ազգային ժողովի համար սահմանվել է նախագծերի քննարկման սահմանափակ՝ երկամսյա ժամկետ: Մյուս կողմից, սակայն, օրենսդրությունը չի նախատեսում այն իրավական հետևանքները, որոնք վրա կհասնեն երկամսյա ժամկետում հարցը չքննարկելու պարագայում:

Ըստ ԱԺ կանոնակարգի 86-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծն ԱԺ-ում քննարկվում է երկու ընթերցմամբ՝ օրենքների նախագծերի համար սահմանված կարգով, իսկ ԱԺ կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ մինչև

Սահմանադրության փոփոխությունների նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը քվեարկության է դրվում Սահմանադրության փոփոխությանը վերաբերող հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին ԱԺ որոշման նախագիծը: Եթե որոշումն ընդունվում է, ապա ԱԺ նախագահն այդ որոշումը երկրորդ ընթերցմամբ քննարկված Սահմանադրության փոփոխությունների նախագծի հետ ստորագրում և ուղարկում է Սահմանադրական դատարան, իսկ հարցի քննարկումն ընդհատվում է մինչև Սահմանադրական դատարանի որոշումն ստանալը:

Սահմանադրության փոփոխությունների նախագծերի նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողության կառուցակարգի էությանն անդրադառնալով՝ Սահմանադրական դատարանն իր 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ ՍԴՈ-1590 որոշմամբ իրավացիորեն նշել է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության ստուգումը Սահմանադրությամբ նախատեսված կանոն է, որին հետևելը սահմանադրական կարգի կայունության երաշխիք է, հնարավորություն է ընձեռում կանխել Սահմանադրության հիմքում ընկած սկզբունքներին և արժեքներին հակասող նորմերի ընդունումը և կարող է ծառայել որպես արդյունավետ միջոց՝ « քաղաքացու և Ազգային ժողովի կողմից Սահմանադրության փոփոխություն ընդունելիս տեղեկացված և հիմնավոր որոշում կայացնելու համար<sup>1</sup>:

Հարկ է նկատել, որ սահմանադրության փոփոխությունների նախագծերը բոլոր դեպքերում ենթակա են պարտադիր նախնական վերացական սահմանադրական վերահսկողության: Այդ մասին է վկայում Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված այն հիմնադրույթը, ըստ որի մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի ընդունումը Սահմանադրական դատարանը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը, ինչպես նաև 169-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ այդ դեպքերում Սահմանադրական դատարան դիմում է Ազգային ժողովը: Այսինքն, առաջին՝ բացի Ազգային ժողովից որևէ այլ պետական մարմին Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության որոշման հար-

<sup>1</sup> « Սահմանադրական դատարան, որոշում ՍԴՈ-1590, ընդունվել է 2021 թվականի ապրիլի 29-ին:

ցով Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն չունի, և երկրորդ՝ սահմանադրի նմանօրինակ ձևակերպումը ենթադրում է Ազգային ժողովի ոչ թե հայեցողությունը, այլ պարտականությունը: Ավելին՝ Սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ Ազգային ժողովը քննարկում է նախագիծը և այն ներկայացնում Սահմանադրական դատարան՝ նախագծի սահմանադրականությունը որոշելու հարցով:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ ԱԺ կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումից հետևում է, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարան ուղարկվում է Ազգային ժողովի որոշման հիման վրա: Հասկանալի է, որ խորհրդարանը, հանդիսանալով կոլեգիալ մարմին, իր լիազորությունները պատշաճ իրականացնելու համար պետք է ընդունի որոշումներ (Սահմանադրության 103-րդ հոդված և ԱԺ կանոնակարգի 97-րդ հոդված), միևնույն ժամանակ, սակայն, առկա է իրավական բաց այն իմաստով, որ կանոնակարգված չեն Ազգային ժողովի կողմից այդ որոշման հնարավոր չընդունման դեպքում վրա հասնող իրավական հետևանքները: Այլ կերպ ասած՝ մի կողմից սահմանադիրը նախատեսել է Սահմանադրության փոփոխությունների նախագծի պարտադիր նախնական սահմանադրական վերահսկողություն՝ Սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը դնելով Ազգային ժողովի վրա, մյուս կողմից՝ ԱԺ կանոնակարգն այդ պարտականության իրականացումը պայմանավորել է Ազգային ժողովի ընդունած որոշմամբ: Ստացվում է, որ եթե Ազգային ժողովը չընդունի նախագիծը Սահմանադրական դատարան ուղարկելու որոշում, ապա Սահմանադրության պարտադիր կատարման ենթակա պահանջը կարող է չիրացվել:

Գտնում ենք, որ սահմանադրական մակարդակում իմպերատիվ կերպով ամրագրված պահանջի իրականացումն օրենքի կարգավորումներից «կախվածության մեջ» դնելն անընդունելի է, ուստի տվյալ դեպքում անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կառուցակարգ, որի պարագայում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը մինչև երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունելը պարտադիր կարգով Ազգային ժողովի նախագահի կողմից ուղարկվի Սահմանադրական դատարան:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը և ԱԺ կանոնակարգը սահմանում են, որ Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը գնահատում է նախագծի՝ Սահմանադրության անփոփոխելի հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Սահմանադրական դատարանն այս հարցն առավել հստակեցրել է՝ արտահայտելով իրավական դիրքորոշում Սահմանադրության նորմերի աստիճանակարգության և հնարավոր ներքին կոլիզիաները բացառելու համատեքստում՝ նշելով, որ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը պետք է համապատասխանի՝ ա) Սահմանադրության փոփոխություններն Ազգային ժողովի կողմից ընդունվելու դեպքում՝ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին, Սահմանադրության՝ միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող դրույթներին և Սահմանադրության այն դրույթներին, որոնք այդ նախագծով չեն փոփոխվում, բ) Սահմանադրության փոփոխությունները հանրաքվեի միջոցով ընդունվելու դեպքում՝ Սահմանադրության անփոփոխելի դրույթներին և Սահմանադրության միայն հանրաքվեի միջոցով փոփոխվող այն դրույթներին, որոնք այդ նախագծով չեն փոփոխվում<sup>1</sup>:

Սահմանադրական դատարանում այս հարցի քննության ընթացակարգային հարցերը կարգավորված են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով: Այդ հոդվածի 4-րդ մասից հետևում է, որ նշված գործերով Սահմանադրական դատարանն ընդունում է 2 տեսակի որոշում՝ կա՛մ նախագիծը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին, կա՛մ նախագիծն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին:

ԱԺ կանոնակարգի 86-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ եթե Սահմանադրական դատարանը Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը հակասող, ապա նախագիծը շրջանառությունից հանվում է, իսկ եթե ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող, ապա Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում քվեարկության է դրվում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժո-

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարան, որոշում ՍԴՌ-1590, ընդունվել է 2021 թվականի ապրիլի 29-ին:

ղովի որոշման նախագիծը (եթե նախագիծը պետք է ընդունվի հանրաքվեով) կամ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը (եթե նախագիծը պետք է ընդունվի Ազգային ժողովի կողմից):

Այս նորմերի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ ԱԺ կանոնակարգը չի կարգավորում այն դեպքը, երբ Սահմանադրական դատարանի կողմից ընդունվում է նախագիծը մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասին որոշում: Եթե որպես ուղենիշ ընդունենք այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի Սահմանադրությանը հակասելու բոլոր դեպքերում (ամբողջությամբ և մասամբ)՝ պետք է նախագիծը հանվի շրջանառությունից, ապա դա չի կարող դիմանալ հասարակ քննադատության՝ այն պարզ պատճառով, որ դրա արդյունքում նախագծի ընդամենը մի կարգավորման Սահմանադրությանը չհամապատասխանելու պատճառով կարող է տուժել ողջ նախագիծը և այդպիսով սահմանափակվել իրավաստեղծ նախաձեռնության իրականացումը:

Ինչպես արդեն նշել ենք՝ այն պարագայում, երբ սահմանադրական փոփոխություններ կատարելու իրավասությունը վերապահված է Ազգային ժողովին և վերջինս պատգամավորների ընդհանուր թվի ճայների առնվազն երկու երրորդով չի ընդունում նախագիծը, ապա այդ նախագիծը կարող է դրվել հանրաքվեի պատգամավորների ընդհանուր թվի ճայների առնվազն երեք հինգերորդով: Սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն Ազգային ժողովը ընդունում է նախագծի ընդունումը մերժելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Այս մեխանիզմի գործարկման համար կրկին ելույթով պետք է հանդես գա քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը՝ ներկայացնելով նախագիծը հանրաքվեի դնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ: Նրա ելույթից հետո ելույթներով կարող են հանդես գալ խմբակցությունների ներկայացուցիչները, որից հետո որոշման նախագիծը դրվում է քվեարկության: Եթե որոշումը չի ընդունվում, ապա նախագիծը շրջանառությունից հանվում է:

Ազգային ժողովի նախագահը Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ Ազգային ժողովի որոշումը համապատասխան նախագծի հետ ուղարկում է Հանրապետության

նախագահին, որը դրանք ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, նշանակում է հանրաքվե:

Սույն հոդվածի շրջանակներում առանձնակի գիտագործնական հետաքրքրություն է ներկայացնում նաև հանրաքվեի դրված օրինագծի ընդունման համար անհրաժեշտ պահանջների ուսումնասիրության հարցը:

Սահմանադրության 207-րդ հոդվածի և Սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը: Մի կողմ թողնելով, ընդհանուր առմամբ, հանրաքվեին վերաբերող շեմերի նպատակահարմարությունը (որոնց վերաբերյալ ընդհանուր միջազգային ստանդարտներ չկան, և տարբեր երկրներ ունեն տարբեր մոտեցումներ ու կարգավորումներ)՝ հարկ ենք համարում արձանագրել, որ հանրաքվեի դրված ակտերի ընդունման համար անհրաժեշտ պահանջների տեսանկյունից օրենսդրությունը չի տարբերակել այդ ակտերը՝ հաշվի չառնելով այնպիսի կարևոր առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ իրավաբանական ուժը, դրանցով կարգավորվող հարաբերությունների կարևորությունը, բնույթը և այլն: Ինչի արդունքում ստացվում է, որ օրենքի նախագծի և Սահմանադրության ընդունման կամ փոփոխման համար նվազագույն անհրաժեշտ ձայների թվաքանակը նույնն է: Այսպիսի մոտեցումն արդարացված չէ, քանի որ փաստացի պահանջվում է բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտի և օրենքի ընդունման համար ապահովել լեգիտիմության միևնույն աստիճանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ պետք է Սահմանադրության ընդունման կամ փոփոխման և օրենքների նախագծերի հանրաքվեով ընդունման համար նախատեսել անհրաժեշտ ձայների տարբեր թվաքանակ՝ հանրաքվեի դրված օրենքների նախագծերի ընդունման համար նախատեսելով ավելի քիչ թվով ձայներ: Այդպիսի պրակտիկա է գործում օրինակ՝ Դանիայում, որտեղ հանրաքվեով սահմանադրական փոփոխությունների ընդունման համար պահանջվում է ընտրազանգվածի առնվազն 40 տոկոսի կողմ քվեն, իսկ հանրաքվեի դրված մնացած ակտերի դեպքում պահանջվում է ընտրազանգվածի 30

1(109)2023  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
◆ ՏԵՂԵԿՎՈՐ  
ՍԱՀՄԱՆԱՐԴՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ



տոկոսի և հանրաքվեին մասնակցած անձանց պարզ մեծամասնության կողմ քվեն<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ, պետք է փաստել, որ օրենսդրությունը ժողովրդական սահմանադրական նախաձեռնությունների շուրջ ծագող հարաբերությունները հիմնականում կարգավորում է նույն կերպ, ինչ ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունները, ուստի այդ իմաստով սույն հոդվածում մեր ներկայացրած դիտարկումները հավասարապես վերաբերելի են նաև այս դեպքում: Միևնույն ժամանակ, սակայն, հարկ է նկատել, որ ի տարբերություն օրենսդրական նախաձեռնությունների, որոնց դեպքում ժողովուրդն ուներ Ազգային ժողովի մերժման վերաբերյալ որոշումը «հաղթահարելու» հնարավորություն և ըստ այդմ, համապատասխան քանակի ստորագրություններ հավաքելու դեպքում օրինագիծը միանգամից հանրաքվեի դնելու հնարավորություն, ապա սահմանադրական նախաձեռնության դեպքում հանրաքվեի դնելու վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է միայն Ազգային ժողովը:

## **Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 23.03.2018թ., ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):
3. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 16.12.2016 թ., ՀՀՊՏ 2017.01.25/5(1280):
4. «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունվել է 25.05.2016 թ., ՀՀՊՏ 2016.05.30/42(1222):
5. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 21.03.2018 թ., ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):

<sup>1</sup> Constitution of Denmark, Article 88, էլ. նետուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Denmark\\_1953?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Denmark_1953?lang=en)  
24.12.2022 թ.:

6. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 24-րդ հոդվածի 6-րդ մաս, ընդունվել է 03.04.2002 թվականին, ուժը կորցրել է 07.04.2018 թվականին, ՀՀՊՏ 2002.05.21/15(190):

7. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-766 որոշում, ընդունվել է 2008 թվականի հոկտեմբերի 14-ին:

8. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 որոշում, ընդունվել է 2021 թվականի ապրիլի 29-ին:

9. Constitution of Romania, Article 74, էլ. նետուրս՝ <https://www.constituteproject.org/constitutions?lang=en&key=initiat> հղումն ըստ՝ 30.01.2023 թ.:

10. Constitution of Croatia, Article 87, էլ. նետուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Croatia\\_2013?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Croatia_2013?lang=en) հղումն ըստ՝ 18.12.2022 թ.:

11. Constitution of Serbia, Article 108, էլ. նետուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Serbia\\_2006?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Serbia_2006?lang=en) հղումն ըստ՝ 23.12.2022 թ.:

12. Constitution of Hungary, Article 8, էլ. նետուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Hungary\\_2016?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Hungary_2016?lang=en) հղումն ըստ՝ 23.12.2022 թ.:

13. Constitution of Denmark, Article 88, էլ. նետուրս՝ [https://www.constituteproject.org/constitution/Denmark\\_1953?lang=en](https://www.constituteproject.org/constitution/Denmark_1953?lang=en) հղումն ըստ՝ 24.12.2022թ.:

14. **Բաղայան Ս.Ս.**, Օրենսդրական նախաձեռնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն իրավ. գիտ. թեկնածուի, Երևան, 2014:

15. **Թաղևոսյան Ա.**, «Ժողովրդական իրավաստեղծ նախաձեռնություն» հասկացությունը, էությունն ու բովանդակությունը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2/2022, էջեր 80-93:

16. Հեղ. խումբ, գիտ. խմբ՝ **Ղամբարյան Ա., Մուրադյան Մ.**, Պետության և իրավունքի տեսություն, ուսումնական ձեռնարկ, 3-րդ լրամշակված հրատարակություն: Երևան, 2018, 688 էջ:

17. **Авакьян С.А.** Конституционное право: Энциклопедический словарь. - Москва, 2000. - С. 675.

18. **Грачев В.С.** Правовые формы воздействия на государство субъектов гражданского общества // Закон и право. – 02/2020. - С. 23-24, էլ. նետուրս՝ <https://cyberleninka.ru/article/n/pravovye-formy-vozdeystviya-na-go-sudarstvo-subektov-grazhdanskogo-obschestva/viewer> հղումն ըստ 14.12.2022 թ.:

1(109)2023  
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ  
◆ ՏԱՀԱՄԱՆԱԴՐՈՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ

19. **Лейст О. Э.** Сущность права: Проблемы теории и философии права. - Москва, 2008. - С. 288.
20. **Маклаков В.В.** Референдум в зарубежных странах. - Москва, 2014. - С. 128.
21. **Петров А.А., Шафиров В.М.** Предметная иерархия нормативных правовых актов. - Москва, 2014. - С. 206.
22. **Самощенко И.С.** Иерархия и основные подразделения нормативных актов социалистического государства: Ученые записки ВНИИСЗ, 1968, Вып. 15. - С. 3-17.
23. Alexander Hamilton, James Madison and John Jay, *The Federalist*, Edited with and introduction and Notes by Lawrence Goldman Oxford University Press Inc., 2008, P. 528.
24. F. Ratto Trabucco, *The Latvian direct democracy tools in a comparative European context*, Oñati Socio-Legal Series, 2019, 10(4), P. 744-788.
25. Hamon F., *Le referendum, Étude comparative*, 2-e éd., Paris, 2012, P. 236.
26. Raul Magni-Berton, Clara Egger, *RIC Le Référendum d'initiative citoyenne expliqué à tous: Au coeur de la démocratie directe*, FYB Editions, 2019, P. 192.
27. Venice commission, OSCE ODIHR, Albania, Joint opinion, On the draft law on the legislative initiative of the citizens, Strasbourg/Warsaw, 22 October 2018, CDL-AD(2018)026.
28. Venice commission, Revised code of good practice on referendums, Strasbourg, 20 June 2022, CDL-AD(2022)015.

## НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ПРОБЛЕМЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ЗАКРЕПЛЕНИЯ НАРОДНОЙ ПРАВОТВОРЧЕСКОЙ ИНИЦИАТИВЫ

### Аннотация

Статья посвящена связанным с закреплением народной правотворческой инициативы в законодательстве Республики Армения основным проблемам, которые существенно препятствуют применению этого института. Неслучайно, что с 2015 года по сей день был

зафиксирован только один случай применения этого института, который, в числе прочего, не был полностью реализован из-за проблем, представленных в статье.

Цель статьи - изучить действующее законодательство Республики Армения о народной правотворческой инициативе, выявить наиболее ключевые проблемы и представить обоснованные предложения по совершенствованию института народной правотворческой инициативы.

Соответственно, в данной статье исследуются: некоторые пороги, установленные законодательством для осуществления народной правотворческой инициативы; некоторые вопросы, связанные с предметом народной законодательной инициативы; проблемы конституционно-правового статуса Центральной избирательной комиссии РА как органа, осуществляющего контроль за процессом осуществления этого института; вопрос соотношения юридической силы между законами, принятыми на референдуме, и законами, принятыми Национальным Собранием; и некоторые детали механизма осуществления народной правотворческой инициативы.

**Ключевые слова:** народная законодательная инициатива, народная конституционная инициатива, международный опыт, Центральная избирательная комиссия, Национальное Собрание, юридическая сила, референдум.

## SOME KEY ISSUES OF LEGISLATIVE REGULATION OF THE POPULAR LAW-MAKING INITIATIVE

### Annotation

The article is devoted to the most key issues related to the regulation of the popular law-making initiative in the legislation of the Republic of Armenia, which significantly hinder the application of this institution. It is no coincidence that from 2015 to this day, only one case of the use of this institute has been recorded, which, among other things, has not been fully implemented due to the problems presented in the article.



The purpose of the article is to study the current legislation of the Republic of Armenia on the popular law-making initiative, identify the most key issues and present reasonable proposals for improving the institute of popular law-making initiative.

Accordingly, this article examines some of the thresholds established by legislation for the implementation of the popular law-making initiative, some issues related to the subject of the popular legislative initiative, the problems of the constitutional and legal status of the Central Election Commission of the Republic of Armenia as a body exercising control over the implementation of this institution, the question of the correlation of legal force between the laws adopted at the referendum and the laws adopted by the National Assembly, and some details of the mechanism for implementing the popular law-making initiative.

**Keywords:** popular legislative initiative, popular constitutional initiative, international experience, Central Election Commission, National Assembly, legal force, referendum.

*Հոդվածը հանձնված է խմբագրություն 01.04.2023, պրվել է գրախոսության 03.04.2023, ընդունվել է պատգարության 13.04.2023:*